

Սուրբ Խաչ Հայաստանեայց Եկեղեցի Holy Cross Armenian Church

P.O. Box 2387 Station "C", Downsview, Ontario, Canada M3N 2V8

Reverend
Houssig Nishanian
Pastor
Telephone (416) 759-6958

Toronto. 10. Դեկտեմբեր 1981.

Գերաշնորհ Տէր
Թորգոմ Ս. Առք. Մանուկեան
Առաջնորդ
Նախագահ Թեմական Խորհուրդի
Նիւ Եօրք.

Սրբազան Հայր,

25 նոյեմբեր 1981 Զորեգշաբթի օր, ծխական Խորհուրդի Ատենապետ
Պր. Արմեն Քիւրքճեան, Առաջնորդարանի վարիչ-քարտուղար Պր. Փրանք
Աւագեանէ, 5 Դեկտեմբեր Շաբաթ օր, ծխական Խորհուրդի երկու ուրիշ
Ներկայացուցիչներով միասին Առաջնորդարան ներկայանալու, հեռաձայ-
նային հրաւէր ստացած է:

Պր. Քիւրքճեան, այդ թուականին Միացեալ նահանգներ ուրիշ տեղ
մը հրաւիրուած ըլլալով, օրուայ անպատեհութիւնը Պր. Աւագեանի ման-
րամասնութեամբ բացատրած է:

Մի քանի ժամեր յետոյ, Պր. Աւագեան դարձեալ հեռաձայնելով,
ծխական Խորհուրդէն երեք լիազօր ներկայացուցիչներ 18 Դեկտեմբերի
Թեմական Խորհուրդի նիստին ներկայանալու հրաւիրած եւ օդանաւային
երթուղարձի տեղերուն ապահովուած ըլլալը տեղեկացուցած է:

Ծխական Խորհուրդը, 8 Դեկտեմբեր նիստին, Թեմական հշխանութեան
հրաւէրը սիրով ընդունած է: Ուրախ է թէ՝ Թեմական Խորհուրդի հետ
հանդիպում մը ունենալու առիթը իրեն կ՝ ընծայուի, սակայն ի յայտ
եկած է թէ՝ անդամներէն երեք քժիշկներ, կանխաւ կարգադրուած հի-
ւանդանոցի ժամադրութիւններուն եւ մնացեալներն ալ քրիսթմսի նախ-
օրեակին, անձնական աշխատութիւններուն պատճառաւ, իրենց գործերէն
չեն կրնար հեռանալ: Պարագան, ծխական Խորհուրդի Ատենապետին մի-


ջոցաւ, 9Դեկտեմբեր Չորեգշաբթի օր, Պր. Աւագեանին հեռածայնով տեղեկացուցուած է եւ խնդրուած, որ տեսութիւնը կատարուի Թեմական Խորհուրդի ուրիշ մէկ նիստին։ Ցարդ, պատասխան չէ ստացուած։

Ծխական Խորհուրդը ստացած է նաեւ 2Երդ Սրբազնութեան 24 Նոյեմբեր 1981 թուակիր եւ 27539 թիւ նամակը, ուր վերոյիշեալ հրաւերը կը կրկնուի։

8 Դեկտեմբերէն ի վեր, ծխական Խորհուրդի անդամներուն կարենալ ճամբորդելու կացութեան մէջ որեւէ փոփոխութիւն չէ եղած։

Ծխական Խորհուրդը, իր այս նամակով, անգամ մը եւս կը խնդրէ, որ այդ տեսութիւնը տեղի ունենայ Թեմական Խորհուրդի ուրիշ մէկ նիստին ընթացքին։

Մատչիմք և Համբոյր
2Երդ Սրբազնութեան Աջին
և Դիմաց
ծխական Խորհուրդի

 
Ղեւոնդ Շահմելիքեան Արմէն Քիւրքճեան
Ատենադպիր Ատենապետ